[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
6	Օգոստոս	2019 թ.		Բ	5075560751
[4] Առաքման ամսաթիվ				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
6	Օգոստոս	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 6 9 0 2 0 8 7 / 1
[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՄԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի			
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)		0 2 6 3 1 2 6 3	
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը			
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ		
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834	
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5		
[20] Լրացուցիչ տվյալներ			
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	
[22] Մատակարարման (առաքման) եղանակը			
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5		

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապահ. հարկ	Այդ թվում՝ անցկաց. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 68156419 բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

06/08/2019 14:22:55

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

21 մայիսի 2019թ. քաղ. Գյումրի

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Մ.Բիշարյանս, քննարկելով վարույթում քննվող 68156419 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2019 թվականի փետրվարի 28-ին ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի ՔՀԲ ավագ օպերլիզոր, ոստիկանության մայոր՝ Հ. Ա. Մարտիրոսյանը զեկուցագիր է ներկայացրել այն մասին, որ օպերատիվ տեղեկություններ է ստացել, որ Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց 81/2 տան բնակիչ՝ Արման Միհերի Պետրոսյանն իր մոտ պահում և օգտագործում է թմրամիջոց:

Նույն օրը, ժամը՝ 11.45-ին, ստացված տեղեկություններն իրացնելիս Գյումրի քաղաքի Ղարսի խճուղուց ապօրինի թմրամիջոց պահելու և օգտագործելու կասկածանքով ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին բերման է ենթարկվել Գյումրի քաղաքի Մուսայելյան 81/2 տան բնակիչ՝ Արման Միհերի Պետրոսյանը, ում մոտից անձնական խուզարկությամբ հագին եղած սև գույնի ձմեռային բաճկոնի աջ թևի ծալած հատվածից հայտնաբերվել է երկու հատ մաստակի նմանվող հատիկներ և դեղահաբի կես մասը: Արման Պետրոսյանը հայտնաբերվածի կապակցությամբ հայտարարել է, որ այն հանդիսանում է «Լորազեպամ» տեսակի հոգեմետ դեղորայքի կես հաբ, որի մյուս կեսն ինքը խմելու միջոցով օգտագործել է, իսկ հայտնաբերված կեսը՝ պահել է իր մոտ հետագայում օգտագործելու համար: Հայտնաբերված «Լորազեպամ» տեսակի դեղահաբն իրեն տվել է իր հարևանուհի՝ Արփիկը, ով ևս հաշվառված է «Գյումրու ՀԱԿ» ՓԲԸ-ում և դեղատոմսով ստանում է հոգեմետ դեղորայք, երբ երեք օր առաջ երեկոյան իր շենքի շքամուտքում հանդիպել է նրան, ով հետաքրքրվել է իր որպիսությամբ: Ինքը բողոքել է, որ չի կարողանում քնել, և Արփիկն առաջարկել է թվով երեք հաբ «Լորազեպամ» հոգեմետ դեղորայք, որն ստացել է «Գյումրու ՀԱԿ»-ից, իրեն ասելով, որ ամեն օր երեկոյան՝ ժամը՝ 22.00-ին ընդունի խմելու միջոցով կես հաբը: Արփիկը դեղորայքի դիմաց իրենից գումար կամ այլ ծառայություն չի պահանջել, ինքն էլ չի առաջարկել: Արման Պետրոսյանը նշել է, որ ինքն ընդհանուր մեկ հաբ ընդունել է արդեն, կես հաբը պահել է բաճկոնի թևի ծալի մեջ, իսկ մեկուկես հաբ էլ ունի Գյումրի քաղաքի Մուշ 2/2 թաղամասի 43 շենքի 22 բնակարանում, որտեղ ներկայումս փաստացի բնակվում է: Այն պահել է ծխախոտի տուփի մեջ հետագայում օգտագործելու համար և պատրաստակամ է այն ներկայացնելու: Հայտնաբերվածը փաթեթավորվել և կնիքվել է «Ծրարների համար» կնիքով՝ վերցվելով հետագա պարզաբանումների համար,:

Դեպքի վայրի զննության ընթացքում Արման Պետրոսյանն իր փաստացի բնակության վայր՝ Գյումրի քաղաքի Մուշ 2/2 թաղամասի 43 շենքի 22 բնակարանի խոհանոցի պահարանի վերնամասից ներկայացրել է «WEST» տեսակի ծխախոտի տուփ, որի մեջ հայտնաբերված դեղահաբերի կապակցությամբ հայտարարել է, որ դեղահաբերից մեկ և կեսը հանդիսանում է «Լորազեպամ» տեսակի դեղահաբեր, իսկ մյուսը «Դիմեդրոլ» տեսակի դեղահաբ է, որն ինքը օգտագործում է անքնության համար:

«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ- բժիշկ-հոգեբույժ՝ Արշակ Վարդանյանի ներկայությամբ ըստ էության նույնաբովանդակ բացատրություն է տվել նաև Գյումրի քաղաքի Մուշ 2/2 թաղամասի 43 շենքի 24 բնակարանի բնակչուհի՝ Սուսաննա Հարությունի Ժամկոչյանը՝

տեսակների են: Դրանք դեղահաբերի տեսքով դեղատոմսով տրվում են իրեն յուրաքանչյուր ամիս «Գյումրու հոգեկան առողջության կենտրոնից»: Բժիշկ Վարդանյանն իրեն պարզաբանել է, որ դեղորայքը մասայական տարածման ենթակա չէ, միայն բժշկի ցուցումով և դեղատոմսով է այն նշանակվում, բացատրել է նաև պահպանման կարգը: Ինքը 2019 թվականի փետրվարի 25-ի երեկոյան պատահաբար տեսել է իրենց շենքի շքամուտքի հարթականին նստած Արմանին, ով բողոքել է անքնությունից, ինքն էլ առանց մտածելու առաջարկել է իրեն նշանակված «Լորազեպամ» դեղահաբերից ընդունել: Անձամբ գնացել և իր բնակարանից բերել է երեք հատ «Լորազեպամ» տեսակի դեղահաբեր և խորհուրդ է տվել ժամը՝ 22.00-ին ընդունել մեկ դեղահաբի՝ կեսը: Արփենիկ Ժամկոչյանն ընդունել է, որ ինքը թույլ է տվել հոգեմետ դեղորայքի տարածում, խախտել է օգտագործման կարգը, որի մասին նախորոք տեղեկացված է եղել, խնդրել է իրեն ներել և քրեական պատասխանատվության չենթարկել:

28.02.2019թ. Արման Պետրոսյանի մոտից անձնական խուզարկությամբ հագին եղած սև գույնի ձմեռային բաճկոնի աջ թևի ծալած հատվածից հայտնաբերված մեկ դեղահաբի կես մասը, և դեպքի վայրի զննության ընթացքում վերջինիս կողմից ներկայացված «WEST» տեսակի ծխախոտի դատարկ տուփի մեջ եղած երկուս և կես դեղահաբերում թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի առկայությունը և այլ հարցեր պարզելու նպատակով նշանակվել է դատաքիմիական փորձաքննություն, որի կատարումն հանձարարվել է ՀՀ ԱՆ «Փորձաքրեագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետներին:

26.03.2019թ ստացվել է փորձագետի թիվ 05861905 եզրակացությունը, որի համաձայն՝

- 1.3 Փորձաքննության ներկայացված ծխախոտի փայլաթիթեղի մեջ առկա 0,06 գրամ քաշով սպիտակ գույնի, կլոր դեղահատի կես հատվածն իր բաղադրության մեջ պարունակում է 0,00046 գրամ քաշով «Լորազեպամ» տեսակի հոգեմետ /հոգեներգործուն/ նյութ:
- Փորձաքննության ներկայացված մեկ հատ 0,13 գրամ քաշով, սպիտակ գույնի, կլոր դեղահատն իր բաղադրության մեջ պարունակում է 0,001 գրամ քաշով «լորազեպամ» տեսակի հոգեմետ /հոգեներգործուն/ նյութ:
- Փորձաքննությանը ներկայացված 0,07 գրամ գրամ քաշով, սպիտակ գույնի, կլոր դեղահատի կես հատվածն իր բաղադրության մեջ պարունակում է 0,00054 գրամ քաշով «լորազեպամ» տեսակի հոգեմետ /հոգեներգործուն/ նյութ:
- «Լորազեպամ» տեսակի հոգեմետ /հոգեմետ/ նյութի ընդհանուր քաշը կազմում է 0,002 գրամ:

«Լորազեպամ»-ը ներառված է «Թմրամիջոցների, հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի մանր, զգալի խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանող» ՀՀ կառավարության 2018թվականի հունիսի 28-ի N 707-Ն որոշման հավելված թիվ 1»-ում:

Փորձաքննության ներկայացված մեկ հատ 0,15 գրամ քաշով, սպիտակ գույնի, կլոր դեղահաբն իր բաղադրության մեջ թմրամիջոցներ հոգեմետ /հոգեներգործուն/ նյութեր չի պարունակում:

2.Արտաքին զննությամբ հետազոտելի դեղահաբերը գործարանային արտադրության են: /..../

5.Փորձաքննության ներկայացված 2,77 ընդհանուր քաշով սպիտակ գույնի, բարձիկի ձև ունեցող, մեկ հատ ամբողջական մաստակից և մաստակի երկու կեսից բաղկացած զանգվածն իր բաղադրության մեջ թմրամիջոցներ հոգեմետ /հոգեներգործուն/ նյութեր չի պարունակում:

«Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի թիվ 146 տեղեկանքի համաձայն Արման Միհրի Պետրոսյանը 26.05.2015թ-ից հաշվառված է «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի նակոլոգիական դիսպանսերում «Հոգեկան և վարքի խանգարում, ափիոնատիպ նյութերի գործածման հետևանքով: Կախավածության համախտանիշ» ախտորոշմամբ և հոգեմետ դեղորայք չի ստանում:

«Գյումրու Հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի թիվ 142 տեղեկանքի համաձայն Սուրենի Հայոյանի Ժամանակվանից 16.10.1995թ-ից հոգեբուժական դիսպանսերում

դեֆեկտ» ախտորոշմամբ և ստանում է «Մոդիտենդ դեպք» 1,0 մ/գ, «Լորազեպամ» 2 մ/գ և «Ցիկլադոլ» 2մ/գ չափերով հոգեմետ դեղորայք:

Դեպքի առթիվ ոստիկանության Շիրակի մարզային վարչության Կումայրի բաժնում 2019 թվականի ապրիլի 01-ին ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 68156419 քրեական գործը և ըստ ենթակայության ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչություն:

2019 թվականի ապրիլի 05-ին քրեական գործն ընդունվել է վարույթ:

2019 թվականի ապրիլի 22-ին որոշում է կայացվել Գյումրու հոգեկան առողջության կենտրոնից առգրավել Արփենիկ Հարությունյանի Ժամակոչյանի ամբուլատոր քարտը:

2019 թվականի մայիսի 07-ին որոշում է կայացվել Արփենիկ Հարությունի Ժամակոչյանի նկատմամբ կիրառել խափանման միջոց՝ ստորագրություն չհեռանալու մասին և վերջինս կասկածյալի դատավարական կարգավիճակում ցուցմունք է տվել, որ հաշվառված և բնակվում է Գյումրի քաղաքի Մուշ 2/2 թաղ 43 շենքի 24 բնակարանում՝ միայնակ: 2019 թվականի փետրվարի վերջին ինքը շքամուտքում հանդիպել է հարևան Արմանին, ով բողոքել է գլխի ցավերից, գիշերները չի կարողացել քնել և իրենից ցավազրկող դեղ է խնդրել: Ինքը նրան պատասխանել է, որ սպասի շքամուտքում, մտել է տուն և իր տան պահարանից, որտեղ դրել է իր դեղերը վերցրել է 3 հատ դեղահաբ և դուրս գալով շքամուտք դրանք տվել Արմանին և ասել, որ խմելու դեպքում գլխի ցավերը կանցնի, ինքը չի ցանկացել դիտավորյալ Արմանին Լորազեպամ դեղամիջոց տալ, ուղղակի հնարավոր է շփոթել է, քանի որ եղել է հոգնած: Ինքը երբևէ ոչ մեկին դեղեր չի տվել, բացի դրանից օգտագործել է բազմաթիվ դեղեր և հնարավոր է շփոթել է, քանի որ ցանկացել է հասարակ ցավազրկող դեղ տալ:

2019 թվականի մայիսի 13-ին որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրության համար վտանգավոր արարքը մեղավորությամբ կատարելու համար Արփենիկ Հարությունի Ժամակոչյանին որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2019 թվականի մայիսի 14-ին Արփենիկ Հարությունի Ժամակոչյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հաշվառված լինելով Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում «Շիզոֆրենիա, պարանոիդ ձև, էպիզոտիկ աճող դեֆեկտ» ախտորոշմամբ և նշված հաստատությունից ստանալով «Մոդիտեն դեպո», «Ցիկլադոլ» և «Լորազեպամ» տեսակի հոգեմետ /հոգեներգործուն/ դեղահատերը, 2019 թվականի փետրվար ամսին՝ չպարզված օրը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, այն է՝ չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների և հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի շրջանառություն իրականացնելու՝ մասնավորապես օրինական կարգով ստացած հոգեմետ նյութը այլ անձին իրացնելու թույլտվություն, բնակության վայրի՝ Գյումրի քաղաքի Մուշ 2/2 թաղամասի 43 շենքի շքամուտքում հանդիպելով հարևանությամբ բնակվող Արման Միերի Պետրոսյանին, վերջինի խնդրանքով, իր բնակարանի պահարանից վերցրել ու ապօրինի վերջինիս իրացրել է 0,003 գրամ «Լորազեպամ» տեսակի հոգեմետ նյութ պարունակող դեղամիջոցի երեք դեղահատ, որից մեկ դեղահատը երկու տարբեր ժամանակահատվածներում Արման Պետրոսյանը խմելու եղանակով օգտագործել է, իսկ երկու դեղահատերը 2019 թվականի փետրվարի 28-ին հայտնաբերվել և վերցվել է ոստիկանության Կումայրիի բաժնի աշխատակիցների կողմից՝ ապօրինի թմրամիջոց պահելու կասկածանքով ոստիկանության Կումայրիի բաժին բերման ենթարկելուց հետո նրա անձնական խուզարկությամբ և դեպքի վայրի զննությամբ:

Առաջադրված մեղադրանքում Արփենիկ Հարությունի Ժամակոչյանը իրեն մեղավոր չի ճանաչել և տվել է նույնաբովանդակ ցուցմունք:

Այսպիսով, Արփենիկ Հարությունի Ժամակոչյանը մեղադրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրության համար վտանգավոր արարքը

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ, 248-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 68156419 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը՝

- Մեղադրյալ Արփենիկ Հարությունի Ժամակոչյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարք կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ է տառապել և երբվանից:
- Եթե Արփենիկ Հարությունի Ժամակոչյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկել է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:
- Արփենիկ Հարությունի Ժամակոչյանը ներկայումս տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի:
- Եթե Արփենիկ Հարությունի Ժամակոչյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկում է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, ինչպես նաև վերջինս կարող է մասնակցել քննչական և դատաքննչական գործողություններին:
- Արփենիկ Հարությունի Ժամակոչյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:
- Արփենիկ Հարությունի Ժամակոչյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում, հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ և հակացուցված չէ արդյոք բուժումը:

3. Փորձագետներին վերջիններիս պահանջով տրամադրել քրեական գործի նյութերը և վերջիններիս պահանջով փորձաքննության կատարման վայր կներկայացվի փորձաքննվող Արփենիկ Հարությունի Ժամակոչյանը:

Ավագ քննիչ՝ **Մ.Գ.Բիշարյան**